ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ. N 23

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7,8, 9,10,11 հոդվածներով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Դալար համայնքի տարածքում 2015թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/, շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակա կան և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ

բբ) 501-1000 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ

բգ) 1001- 3000 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝30000դրամ

բդ) 3001 – ից և ավելի քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 50000դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ

դ) 20և ավելի քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծով՝

ա) չի նախտեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500դրամ

բ) բացի օբեկտի վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցներ, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝

1)ոգելից՝ և արկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3500 դր.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 դրամ

5.Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ. 1 քմ – ի համար

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.

գ)Խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ.

գա)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

5.1 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ

գ)բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ

զ)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս /արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

է) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղ ական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 500 դրամ.

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1500 դրամ

11.[1] Սույն հոդվածի 1 – ին , 2 – րդ և 3 – րդ կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

Տեղական վճարներ

ա)Համայնքի տարածքում շինարարական կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերա- կառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

բ) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չա- փագրման և այլ նման աշխատանքների համար՝ ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհա- տուցման վճար՝ 1000դրամ.

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակեր- պելուհետ կապված ծախսերի փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար 1000 դրամ.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել հիմնական միջոցների ցանկը համաձայն գույքագրման թիվ 1 ցուցակի՝

Օբեկտի անունը և համառոտ բնութագիրը	կառուցման տարեթիվը	քանակը	արժեքը(դրամ)
1. Գյուղապետարանի շենք	1972թ	1	3894140.
2. Մանկապարտեզի շենք	1988թ.	1	3086965
3. Կուլտուրայի տան շենք	1982թ.	1	24737770
4. Կոլտնտեսության գրասենյակի շենք	1937թ.	1	24885
5. Գրասենյակներ ֆերմայում	1973թ	1	1496528
6. № 2 կովանոցի ցանկապատ քարից	1958թ.	1	115425
7. Հուշարձան քարից	1958թ	1	4171
8. Գազի մագիստրալ	1979թ	1	1057639
9. Գազի մագիստրալ	2004թ.	1	950000
10.Գազի մագիստրալ 252,01 երկ.	2006թ	1	1299936
11. Սիլոսի աշտարակ	1950թ	1	1776
12. № 2 կովանոցի տանբուր	1958թ	1	318
13. Եկեղեցի քարից	1902թ	1	1786259
14.Բակի ցանկապատ	1956թ.	1	446752
15. Արտեզան ջրհոր №1	1967թ	1	474454
16. Արտեզան ջրհոր №3	1980թ	1	715692
17. Արտեզան ջրհոր №4	1996թ	1	2531000
18. Պահակատուն քարից	1955թ	1	862
19. Ավտոգարաժներ քարից	1955թ.	1	493441
20.Տրակտորի գարաժ և պահեստներ	1978թ.	12	1252403
21. Դաշտային պահակակետեր	1961թ	4	1415

22. Գյուղ. գործիքների ծածկ (նավես)1966թ.1 739181
23. Բույժ կետի շենք 1955թ. 1 1270000
24. Ավտոմեքենա Գազ - 31029 1999թ. 1 2552000
25.Հեռուստացույց ,,Արայ,, 2003թ. 1 70000
26. Խմելու յրի ջրագիծ 2004թ. 1 4145300
27. Խմելու յրի ջրագիծ 2005թ. 1 600000
28. Համակարգիչ (224040 դ.ր),
տպիչ (99960 դ.ր) 2005թ. 1 324000
29.Կանգառի ծածկ և նստարան 2006թ 1 200250
30. Գրասենյակ. կահույքի հավաքածու 2007թ 1 275000
31. Պրինտեր MF 4010 (երեքը մեկում) 2008թ. 1 88000
32. Ջեռուցման համակարգ (Մերկուրի) 2008թ. 1 630000
գյուղապետ. շենքում
33.Ավտոմեք. գազբալոնային համակ. 2008թ. 1 298000
34.Համակարգիչ 2008թ. 1 347749
35.Խորքային պոմպ ,, Մերկուրի,, 2008թ. 1 24745347
36.Խոզանոց 1959թ 1 1329562
37. Փափուկ կահույքի հավաքածու 2010թ 1 300000
38. Օդորակիչ << Հիտաչի>>ME14HZ 2012թ. 2 560000
39.Պահարան 2013թ 2 150000
40.Համակարգիչ G 540/2գբ/50գբ
գտ 210PHILIPS 19
(պրոցեսոր, մոնիտոր, ստեղնաշար) 2013թ 1 205000
41. Տպիչ HP Lasher JET2014 2007թ. 1 48000
42.UPS (Mercury) 2013թ. 2 40000
43.Արտաքին էլեկտրական լուս. ցանց 2014թ (27) 4526630
44.UPS էլ կուտակիչ 2014թ. 1 28000
45. Հոսանքի կարգավորիչ 500վտ 2014թ 1 12400
46.Գրասեղան 2014թ 1 52000
47. Մոնիտոր 2014թ 1 33000
48.Տպիչ 2014թ 1 30000
49. Համակարգիչ 2014թ. 1 100000

Ընդամենը՝ 88527033դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2014թ. N 25

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2018 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի 2015-2018թթ. զարգացման քառամյա ծրագիրը՝

1.Համայնքի փողոցների լուսավորության անցկացման ավարտում:
2.Եկեղեցու զանգակատան շինության կառուցում:
3.Մանկապարտեզի չվերանորոգված մասի վերանորոգում, բակի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում:
4.Սպորտ հրապարակի, ֆուտբոլի խաղադաշտի կառուցում:
5.Գյուղամիջյան փողոցների խճապատում, բարեկարգում և կանաչապատում:
6.Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցում:
7.Ոռոգման ջրագծերի անցկացում, կիսախողովակների տեղադրում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ